

Հարկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ:

Փոխարինում զրկում են միմյան խմորագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Трудовой Редакция „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմորագրատանը բաց է առաւտեան 10—2 ժամ:

(Բացի կիրակի և տօն օրերէն):

Հայտարարութիւնները ընդունուում են ամեն շաբաթ:

Հայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կօպէկ:

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՆԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1879 թին

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱՅԻՆ ԼՄՆԵՆ ՕՐ, բացի տօն և տօներէն հետեւեալ օրերէն:

Լրագրի գինը և պրօգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԵՄԲԵՐԻ ՀԵՌԵՄԻՆԻՆԻ: ՄԵՇԱԿԻ տարեկան գինը 10 րուբլ է, կէս տարվանը 6 րուբլ: Գրվել կարելի է ՄԻՍՏՆ ԽՐԱԳՐԱԿԱՆ ԴԵՋ:

ԼՄՆԵՆԻ ՀԵՐԵՄԻՆԻՆԻ Ժախվում են 5 կօպէկով հատը: Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցեով՝ ТИФ-ЛНСБ Редакция „Мшакъ“.

Խմորագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի նշանաւոր խնդիր:—Ներքին տեսուչութիւնը, Նամակ Ախալքալաքից: Նամակ Թելեթից: Ներքին լուրեր:—Արտաքին տեսուչութիւնը: Անգլիայի Առտորիա: Ֆրանսիայի Նամակ Թելեթից: Նամակ Թելեթից:—Արտաքին լուրեր:—Մշակի հեռագիրներ:—Հայտարարութիւններ:—Տեղեկացոյց:

ՄԻ ՆՇԱՆԱԿՈՐ ԽՆԴԻՐ

Եւթմ էլ ոչ գրի համար տարակուսելի չէ կարող լինել որ թիւրքաց Հայաստանը Մշակայի ձեռքում մի տեսակ մասնաւոր սեփականութիւն է դառնում: Եւթմ գլխան հետզհետեւ տիրապետում է ամբողջ Փոքր-Ասիան և մանաւանդ Հայաստանը, նշանակում է ամեն տեղ իր հիւպատոսներին, ձգտում է նշանակել Հայաստանի վալիի պաշտօնին մի անգլիացու, խոստանում է թէֆօրմներ մոցնել, բայց մի և նոյն ժամանակ աշխատում է որքան կարելի է ուշացնել իր խոստումների կատարումն, իսկ առ ժամանակ թէ Լըզըրում և թէ Հայաստանի ուրիշ քաղաքների հիւպատոսներ, իբր թէ անկողմնապահութեան, համբերողութեան և ազատութեան անունով թոյլ են տալիս ամերիկացի բողոքական միսիոնարներին քարոզել բողոքականութիւնը հայերի մէջ, այդպիսով անշատել տալով նրանց իրանց ազգային եկեղեցուց և երկպառակութիւն սերմանելով հայ հասարակութեան անդամների միմեանց մէջ:

Եւթմ բոլորը կատարվում է քաղաքական նպատակով, այսինքն որքան հնարաւոր է թիւրքաց հայերին Ռուսաստանի աղղեցութենից հեռացնելու նպատակով: Եւթմ երբ Եւթմի Ռուսաստանի հարեան է դարձել, երբ նա այդքան ճարպիկութեամբ աշխատում է նուազեցնել Ռուսաստանի ոյժը նորա պետութեան սահմանների մօտ, ուստաց կառավարութեան ներկայացուցիչները, կամ զինուորական ազէնտները Հայաստանում պէտք է իրանց կողմիցն էլ շատ զգոյշ վարվեն, շատ ճարպիկութեամբ դործեն, որպէս զի կարողանան մրցութիւն անել Եւթմի խորամանկ և հեռաւ տես քաղաքականութեանը: Որքան բազմաթիւ կը լինեն ուստաց զինուորական ազէնտներ Հայաստանում այնքան նրանք աւելի հեշտութեամբ կը կարողանան ընդգիմադրել երկրի վրա ունեցած իրանց բարոյական ներգործութեամբ անգլիական ինտրիգաներին: Յանկալի կը լինէր որ ուստաց զինուորական ազէնտներ գրտնվէին ոչ թէ միայն Լըզըրում մէջ, բայց և Վանի, Մուշի մէջ և գուցէ ուրիշ տեղերում: Որքան ուստաց զինուորական ազէնտները աւելի ծանօթ կը լինեն Հայաստանի տեղական լեզուներին, աւելի տեղեակ կը լինեն երկրի հանգամանքներին, այնքան նրանց խաղալու գերը Հայաստանում աւելի սպառնող կը դառնայ:

անգլիացիների համար: Եւթմ պատճառով ուստաց քաղաքականութեան նպատակներին ամենաշարմար, իսկ անգլիական դիտաւորութիւններին ամենավտանգաւոր բան կը լինէր, եթէ ուստաց կառավարութիւնը հայերին նշանակէր զինուորական ազէնտներ թիւրքաց Հայաստանի զանազան քաղաքների մէջ:

Եւթմիցիների դէմ թիւրքիստում աշտութեամբ մրցել կարող է միմիայն հայը: Եւթմ պատճառով նոյն իսկ ուստաց պետութեան նպատակների համար շատ յարմար կը լինէր եթէ Հայաստանի մէջ ուստաց հիւպատոսների կամ զինուորական ազէնտների տեղերում հայեր նշանակվէին: Իսկ երկրի լեզուն, ամբողջ բարբու վարքը չիմացող, տեղական հանգամանքներին անծանօթ մարդ բոլորովին կը ճնշվի, կրաւորական կը դառնայ, կանհետանայ անգլիացիների քաղաքական ինտրիգաների շնորհով:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՐԱԿԱՐԱԿԻՑ

15 նոյեմբերի

Յուրա է: Մօտակայ սարերը արդէն ծածկված են ձիւնի հաստ ծածկոյթով, բայց քաղաքում դեռ չոր է, հազիւ երբեմն գալիս է անձրև: Վերջին կէս ամսվայ միջոցին բաւականին նորութիւններ են պատահել մեր քաղաքում, բոռնցքի իրաւունքը արձակ համարձակ տիրում է մեր մէջ, մեզ հետզհետեւ զգալի է դառնում պօլիցիայի բացակայութիւնը:

Պատերազմից առաջ մենք երկու ժանդարմներ ունէինք, որոնց միջոցին քաղաքի մէջ այսպէս կռիւններ չէին պատահում, բայց այժմ ունենք մի պօլիցիական վերահսկող (преставь) օգնական մի քանի հայտասնապետներով: Մենք չենք կարող ասել թէ այս վերջինը խղճմտաբար չէ կատարում իր պաշտօնը, ոչ, նա կատարում է նրան այնքան, ինչքան կարելի է կատարել նրան մի մարդու, որի ստորադրեալները մի մեծ բան չեն անում:

Եւ արդարեւ ինչ կարող են անել հայ տասնապետները, նոքա կարող են զինուորների համար տեղեր պատրաստել և այլն, բայց յաճախ պատահած կռիւների առաջն առնել չեն կարող: Թող փորձի հայ տասնապետը մի կռիւ խաղաղեցնել և եթէ նրան աշողլի անջեաս զուրս զալ բռնուցքի օրինակատարութեան միջոց, նրան կարելի է բաղաւոր համարել:

Այդ հանգամանքը իրանք տասնապետներն ևս լաւ են գգում և դրա համար է որ կռիւների միջոցին նրանց չէ կարելի տեսնել փողոցում: Այդպէս չէր լինի, եթէ դրանց փոխարեն լիւնէին կազակներ կամ թիֆլիսի պօլիցիականների պէս հաստատ ծառայողներ: Նորութիւնների թիւն կարելի է վերաբերել և նորոգ բացված

կամաւոր տեղաբանը որից առաջ մեծ դժուարութիւններ էինք կրում տեղեր ճարելիս: Գրագուհների և կաղակ—արտիկերիստների գալով մեր քաղաքի առևտուրը բաւականին կենդանացաւ: Դա շատերի արժաթատիրութեանը բաւականութիւն է տալիս թէն այդ նորեկ հիւրերից կաղակները երբեմն զուարճալի խաղեր են խաղում վաճառականների հետ: Օրինակ սրանից մի ամիս առաջ կաղակ օֆիցերներից մինը դաժնով խփում է պատահող հային և ինչպէս լսեցինք մինչև բռնի ֆօտօգէն էր խմացրել... պարոնի ձեռք որով նա կամեցել էր անկիրթ հայերին կրթել շատ դուր չեկաւ վերջիններին և այդ տեսակ վարմունքի մասին պրօտօկոլ է կազմված:

Մի քանի խօսք ևս մասնագիտութեան (специализм) և նրա օգտաւտեղեկեան մասին: Ընթերցողը եթէ յիշում է Ախալքալաքից հաղորդած մի լուր որ առում էր թէ նրա մօտակայ գիւղերից մինի մէջ մի 18 տարեկան երիտասարդ մի իննամեայ աղջկան բռնաբարել է և թէ աղջիկը հիւանդ պառկած է, այժմ ինչպէս լուսմենք, մեր գաւառական բժիշկը ներկայացրել է հայտարար դատաստանատանը մի թուղթ, որով յայտնվում է, որ այդ իննամեայ աղջիկը արդէն առաջուց եղծված է եղել: Այժմ մասնագիտութեան օգուտը, եթէ ոչ այդ աղջկայ մահով կան հասակում այդպիսի հակում ունենալը ծածուկ կը մնար... Եւթմ թէ որքան օգուտ է բերում մասնագիտութիւնը և թէ մեզ պէս պրօֆանները որքան անբաղդ են դուրս լինելով մի որ և իցէ մասնագիտութիւն ուսումնասիրողը:

Վերջին ժամանակ աղքատների թիւը բաւականին բազմացել է. դրանք գլխաւորապէս վանի և Եւթմիցիների սանջակներից փախած հայեր են: Հիմարտ է, հայը մի կամ երկու կօպէկ է վճարում աղքատին, բայց եթէ նա առաւօտից մինչև երեկոյ մի կամ երկու կօպէկով ցրվելու լինի իր փողերը այնու ամենայնիւ նրա օրական ծախսը կը հասնի մի խոշոր թուի: Օրինակ միայն եկեղեցում ինչքան փող կը ծախսէր նա: Ներսէ կը մտնում եկեղեցի և ահա տեսնում էք մի շարք մարդիկ մի մի մետաղեայ ափսէ ձեռքերին, քահանաներից մինը ևս այդ շարքի վերջինը լինելով, բուրվաւոր ձեռքին շրջում են և փողեր են հաւաքում: Գայտնվում է որ այդ ափսէներից մինի հաւաքածը էջմիածնի համար է, միւսինը Երուսաղէմի, երրորդինը սուրբ Կարապետին է այլն, և այդ գործողութիւնը կատարվում է ժամասացութեան միջոցին: Եւթմ անգամ Հարկաւոր չէ մտաւալ որ եկեղեցու գաւթում քարերի վրա ծնկաչոք ցրտից դողում են 5—10 աղքատներ: Որքան անձուներ բան է ժամասացութեան միջոցին, երբ ժողովուրդի միտքը ամփոփված է լինում ազօթելու, զբաղեցնել ժողովուրդին փողի չընկնելով: Երբեմն եկեղեցին, որ մի հատ միայն ունենք—այնպէս լի է լինում ժողովուրդի բազմութեամբ, որ անկարելի է լինում ձեռքը գրպանը տանել, այնու ամենայնիւ մեր ջերմեաւոր և անխնայ քահանաները ճարպիկութեամբ անցնում են ժողովուրդի միջին, որը այդ միջոցին այլ ևս չէ ծածկում իր անբաւականութիւնը տէր հօրից... Արեւօք չէ կարելի վերադիտել այնպիսի անարարութիւնը վերջացնելով, կնքով վաւերացրած գանձանակներ դնել եկեղեցում նուիրատուութիւններ հաւաքելու այն վանքերի համար, որոնց անունով այժմ հաւաքում են:

Գրող

ՆԱՄԱԿ ԹԵԼԵԹԻՑ

5 նոյեմբերի

Ուղղելով նամակս ազնիւ խմորագրութեանը յուսով եմ որ տեղի կը տաք ճշմարտաւէր լրագրիդ մի անկիւնում:

Վաղուց էր որ մտաւցել էի իմ հայրական Թելեթի սուրբ Գէորգ ուխտատեղին, յանկարծ միտքս եկաւ այս օրերս, թէ ինչպէս հօրս կենդանութեան ժամանակ տարին մի և երբեմն եր-

կու անգամ կերթայինք թեթեւ և ամբողջ շաբաթ արախ օրեր կը վայելէինք: Աճեցին դնալ և խնդրեցի բարեկամներինս մէկին կառքով երթալ միասին: Արդարեւ հէնց որ տեսայ կակալի ծառը, կենդանացան յիշողութեանս մէջ մանկական քաղցր յիշատակները, թէ ինչպէս այն ծառի տակ նստած ծնողացս և բարեկամաց հետ կը զմայլէինք զանազան զուարճութիւններով: Շատ լիք փոփոխութիւն տեսայ այդտեղ, այն է եկեղեցին մեծացրած և մէկ էլ զանգակատան առաջ մի փոքր բաղնիս: Գիւղացիների մեծ բազմութիւն կար կախէթից եկած, որոնք թափված էին բաղնիսների և կտուրների տակ, այն ինչ սենեակները դատարկ էին, եւ լաւ եմ յիշում այդ անմիջ զոհերի նուիրատուութիւնը, երբ նպատակ ունէին այդ նոր եկեղեցին կառուցանելու: Մի ծերունի փառահեղ քահանայ կար տէր-Գէորգ անուամբ որը կը կանգնէր եկեղեցու դռանը և վրացերէն քարոզութեամբ բառական կենդանի ոչխարներ և երինջներ թողնել կը տար շինութեան համար: Մեզ հարկաւորվեցաւ մի սենեակ մի քանի ժամ մնալու, դիմեցի մի քահանայի որը վանահայր էր կոչվում և խնդրեցի սենեակ, նա մի արհամարհական հայեացք գցելով վրաս ցոյց տուաւ դիմել և խնդրել մի անպիտան մարդու, որին ես վաղուց ատում էի իր անվայել վարմունքով: Դիւրանաւոր եղած ժամանակը բարեկամս նշմարելով դէմքիս վրա անախորժ նշաններ՝ ինքն դիմեց այն անպիտան պարոնին և խնդրեց. նա եւս մեծաթաղով պատասխանեց (համբերեցէք) ժամանակ չունենալ և անպայտացաւ մեր աչքից: Պատարագը արդէն սկսած էր, մտանք եկեղեցին. վանահայր կոչված քահանան կանգնած էր մոմավաճառի մօտ, պատարագէին սպասաւորում էր մի այլ քահանայ և մի անհամ զիւղական տիրացու: Երգեցողութեան անհնարաշնորհները զգլած ցաւելով դուրս եկանք եկեղեցուց և տեսնելով այդպիսի հուշակաւոր եկեղեցու անախորժ դրութիւնը, հետաքրքրութիւնս չարժեք տեղեկանալ այդտեղի հանգամանքները, թէ ինչու անկարգ դրութեան մէջ է այդպիսի օրինաւոր եկեղեցին: Ասացին որ ուսումնարանի հոգաբարձութեան իրաւունքի տակն է այդ ուխտատեղին և կան ուսուցիչներ և անուսուցիչ ծառայողներ:

ա. Վանահայր քահանան է, որի ձեռքին է (թէ և ամեն իրաւունք, բայց այսպէս է կարգադրված) մասունքի արդիւնքը և մատուցների իրաւունքը, ստանում է 25 ր. ամսական, բացի իր դիտեցած արդիւնքի, որովհետեւ բացի ութ հոգուց բաղկացած ընտանիքը՝ պահում է կնոջ ազգականներից հինգ հոգի: Անցեալ ամիս 200-ից աւելի ոչխար և երինջ է մորթվել, մի և նոյն ժամանակ միաբնակութիւնը տրանջում էր վանահայրից և ասում էր, որ մտերմ ծախում է և իր բացակայութեան ժամանակ հսկողութեան պաշտօնը յանձնում է իր զոքանչին և որդոցը:

բ. Մոմավաճառը, որը միայն մոմ է ծախում՝ ստանում է 8 ր., սա էլ ընտանիքի տէր է, միթէ կարող է այդքանով ընտանիք կառավարել (բայց սրա համար ասում են, որ սուրբ մարդ է):

գ. Շինութեան մասեան պահողը ստանում է 9 ր., սա էլ շինութեան համար նուէր տուողներին ասում է, (այս ինձ քե տալի թէ շինութեան):

դ. Սենեկապետ պարոնը ստանում է 8 ր. բայց սրա արդիւնքը պարզ է, մենք 4 ժամ մը՝ նախ և համար սենեակի վարձ տուցինք 60 կ., բացի մեղանից: Գնացած պաշարեղէնից և այսպէս ամենքը տալիս են, մատուցի ոտները և դուռը սրանն է:

ե. Ջուր բերողը, սրա ուսուցիչ գիւղն է տալիս, տան վրա տարին 3 լիտր հաց և ուխտաւորներին ամեն մի կուժ ջրի համար ստանում է 20—10 կ., վերջինը 5 կ., բայց աւանակը և կուժերը եկեղեցունն է:

զ. Երկու քահանայ և մի տիրացու առանց ուսուցիչ են ծառայում. լսելով և տեսնելով սրբաւոր վիճակը ցաւեցինք, մտածեցինք քահապետի կերպով շահեցնել այս զրկվածներին, խնդրեցինք պահպանել սակ, բայց սրանք մերժեցին սակելով (այդ վանահայր պաշտօնն է), սրբաւոր իրանք յայտնեցին վանահօրը կատարել մեր ցանկութիւնը, բայց նա ուրիշ գործով զբաղված լինելով թող տուեց նրանց կատարել, իսկ մեզնից ստացած փողը գցեցին մասունքի տուփի մէջ, որը մեր ցանկութեան հակառակ էր, որովհետեւ մենք ինքներս տուփի մէջ ձգել էինք փող: Ասացինք, ձեռք-հարկ, ձեռք տուցինք այն փողը, զուժ ինչու գցեցիք տուփը. պատասխանեցին որ պահպանելի փողը մեզ չէ պատկանում:—Ուրեմն ինչ է ձեր արդիւնքը:—Երբ պատարագ անել կը

տան մեզ և ինչ կը տան այն է մեր արդիւնքը և այն եւս ասում են ուսուցիչները: Վանահայրները, եթէ զիւղացի լինի պատարագ խնդրող՝ այն պատարագը արդարեւ պատկանում է տուփին, որովհետեւ զիւղացին չէ հասկանում ինչ է խնդրում: Արդարեւ ես ինքս ասում եմ որ քահանայք ձրիակեր են, բայց այդ թշուառականները բոլորովին զրկված են եղել: Իսկ ինչ որ վերաբերում է սենեակներին, պատերը սեպցած, կեղտոտ, յատակները անհարթ, լուսամուտների ապակիները կոտորած (բացի մի սենեակից), ճանապարհները թէ կառքի և թէ հետեակի շատ վատ:

Հոգաբարձութեան ուղարկութիւնը հրաւիրելով այս հանգամանքներին վրա, խորհուրդ կը տայինք քանի որ եկեղեցին 5—6000 ր. եկամուտ ունի, ճանապարհները չինել, սենեակները բարեկարգել, որի մասին լրագրիդ միջոցով խօսել է մի արկին: Բոլորովին աւելորդ են մասնաւոր ուսուցիչ տալիսները, որոնք իրանց ստացած ուսուցիչներով բաւական չեն և զգուցանում են: Երբեք ուխտաւորներին, մասնաւոր որ այդ պաշտօնները (բացի մէկից) վանահայր պատկանութիւնն է. և եթէ այդ մարդիկը անշուշտ պէտք է լինեն այդտեղ ուրեմն վանահայրը շատ աւելորդ է, քանի որ այդ երկու քահանայք կարող են կատարել նրա պաշտօնը և մէկի բացակայութեան ժամանակ միւսը կը կատարէ այն պաշտօնները իսկ մնացած 300 ր. ուսուցիչ բաժանել երկու քահանաներին, որոնք իրանց միւս արդիւնքների հետ կը լինեն բաւական և կը ծառայեն աւել: հաւատարմութեամբ առանց զգուցանելու ժողովրդին և կարելի է սպասել նրանցից կարգաւորութիւն և սէր:

Գուցարանը, որ աղին հոգաբարձութիւնը անուղղորդ չի թողնի այս մեր նկատողութիւնները և կիրառութի մեր ասածները բոլոր թեթեւի ուխտաւորների բաւականութեան համար:

Թէթեթի ուխտաւոր

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 14-ին թատրոնատէրների խումբը մի ներկայացումն տուեց այստեղի հայ թատրոնական դահլիճում: Խաղում էին «Սանդուխտ» ողբերգութիւնը և «Երկուստ էլ քաղցած ենք» վերջինը: Խաղը առհասարակ լաւ չը գնաց»:

Գողթրուա եղբայրների ԹԻՖԼԻՍԻ Ֆրանսիական ցիրկում ամեն օր շարունակվում են ներկայացումներ, որոնք շատ բազմակողմանի են և ձանձրոյթ չեն պատճառում: Ձի հեծնող կանանցից նշանաւոր են օր. Գողթրուա և Ալեքսանդրին: Եղբայրներ Չերեմով կուսակցութեան նշանաւոր պէս լաւ են: Առհասարակ ցիրկը շատ հարուստ է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

ԼՕՐՈՂ Բիկոնաֆիլդի Բերլինի դաշնագրի պայմաններին իրաւործելու մասին ասած ճառից անմիջապէս յետոյ, մենք պաշտօնապէս իմացել ենք, ասում է l'indépendance Belge լրագրի Լոնդոնի սեփական թղթակիցը, որ պ. դը Ժիւն, որ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի պաշտօնակատար է, կայ չորս օր, որ Ս. Պետերբուրգի անգլիական դեսպանին մի ծանօթագրութիւն (note) է ներկայացրել, որի մէջ ասված է ծարի կողմից, որ Ռուսաստանի դիտաւորութիւնը եղել է միշտ յարգել և կատարել Բերլինի դաշնագրի պայմանները: ԼՕՐՈՂ Բիկոնաֆիլդի Դամբիլէսի սրի նման բռնած ունէր իր ճառը Ռուսաստանի դիւանը: Հնար չը կար խուսափելու, և այն պատասխանը, որ միայն երեկ երեկոյան մեզ հասաւ, Ռուսաստանը տուել է աւանայ և ստիպմամբ Անգլիական դեսպանը այս պատասխանը ընդունեց միայն շարաթ առաւօտ, այսինքն ճիշդ այնպիսի ժամանակ, որ նա հեռադէպ այս լուրը լՕՐՈՂ Բիկոնաֆիլդին, որը մի ուրիշ ճառ էր պատրաստել այն դէպքի համար, եթէ Ռուսաստանը անկեղծ ու գոհացուցիչ պատասխան չը տար:

Երեկ եթէ այդ լուրը հասած չը լինէր, լՕՐՈՂ քաղաքագրի բանկէտում մենք մի ճշմարիտ ազգու ճառախօսութիւն չունենայինք, որի մասին դժուար թէ կարելի լինէր ասել, որ առանց նորութեան չը լինէր:

Վաղը կը կայանայ միւնիստրների ժողովը: Այլ ևս դրա մասին անհանգիստ չեն լինում, որովհետեւ լՕՐՈՂը գոհացուցիչ են, և հաւաստի են, որ Ռուսաստանը հաստատապէս վճռել է, որ ամենայն ճշգրտութեամբ և խղճմամբ լրագրի կատարէ Բերլինի դաշնագրի բոլոր պայմանները, որ նրան են վերաբերում: Իրան պարտականութիւնը կատարելուց յետոյ, Ռուսաստանը աւելի ևս իրաւունք կը ստանայ պահանջել Թիւրքիայից, որ նա էլ իրան վերաբերեալ պարտականութիւնները կատարէ:

Ճշմարիտ չէ այն լուրը, որ ասում են իբր թէ անգլիական կառավարութիւնը եւրոպական տէրութիւններին խնդրել է ժողովը կազմել: Սան-Ստէֆանոյի դաշնագրի կարգաւորութիւնը ինչպէս և Արիւստոսի դատարկելը Ռուսաստանի և Թիւրքիայի գործն է: Միակ դժուարութիւնը, որ կարող է օտար պետութիւնների միջամտութեան իրաւունք տալ այդ առաւելան այն զօրքերի թիւն է, որոնք պէտք է գրաւեն Բոլգարիա և Բուլգարիա: Բերլինի դաշնագրութեան համաձայն Ռուսաստանը դրաւած երկիրներում 50,000 զօրքից աւել չը պէտք է ունենայ: Այս բոլոր պէս հէնց դրա եւապատիւր միայն Բալկանների հարաւային կողմումն է, առանց հաշվելու Բոլգարիայի և Դորբուջիայի զօրքերը: Նույնպիսի բացատրելի կէտերից մէկն էլ հէնց այս է:

Ուէյթի իշխանը շուտով գնալու է Սիւֆֆօլի, ուր նա մի քանի օր սիրիւշար Վալտարի հետ Լիւրնոնում կանգնացնի: «Pall Mall Gazette» լրագրին հեռագրում են Բերլինից նոյեմբերի 14-ին, որ այնտեղ շարաթ օրը սպասում են կոմս Նուվալովին: Լրագիրները հաղորդում են որ նա պէտք է գնայ Ֆրիստրիսպուէ Բիւմարկին տեսութեան և որ Լոնդոն գնալուց առաջ նա փոքր ինչ կը մնայ Փարիզում:

Պ. դը Բեռնար, որ Բերլինում առաւոց պատերազմական պաշտօնայէ, պէտք է զընայ Վիսթադէն, որտեղ կայսրը նրան կընդունէ: Ասում են, որ իբր նա մի շատ հարկաւոր բան պէտք է հաղորդէ նորին Մեծ թագաւոր: Վիէնայի գերմանական դեսպանին Պէշտ կանչեցին:

ԱՌՍՏՐԻԱ

Մինչև այժմ աւստրիական մամուլը շատ քիչ ձեռք տեղեկութիւններ է տուել գերմանական Բէլի Բոսնիայի յանձնարարութեան մասին, ինչպէս և գերմանական Ֆրիլիպպովիչի յետ կանչվելու պատճառների մասին:

Բերլինի «Montags Zevue» լրագրը այս բանի վերաբերմամբ Վիէնայի մի թղթակցութիւն է հրատարակել որին «Neue Freie Presse» լրագրը մեծ նշանակութիւն է տալիս նրան արտատպելով: Այնտեղ ասված է որ բարոն Ֆրիլիպպովիչ երկար ժամանակ է ի վեր մտածում էր այն ծրագրի մասին, որ Կրօստիան և Սլավոնիան բաժանէ Ունգարիայից և նրանցից Դալմատիայի հետ միասին մի առանձին տէրութիւն կազմէ, և մինչդեռ նա կարծում էր թէ իր դիտաւորութեան երազործելու փայլէ հասել է, յանկարծ աւստրիական գունդերը մտնում են Բոսնիա:

Բայց հէնց որ միանգամայն այս նահանգը զբաղեցաւ աւստրիական խմբերով, բարոն Ֆրիլիպպովիչ շտապեց իսկոյն գործակաւորներ և զանազան ազդեցութիւն ունեցող մարդիկ բերել աւա Կրօստիայից, որպէս զի աւելի դիւրացնէ Բոսնիայի միացնելու գործը: Տեղական պաշտօնական լրագիրը, չը նայելով

շատերի բողոքին, այդ օրը առանձնապէս նա կրօնատական լեզուով հրատարակեց, և գերմանական Ֆրիլիպպովիչ բացարձակապէս քարոզեց, որ աւստրո-ունգարական կառավարութիւնը այսուհետեւ երբեք վարչական ձև կունենայ: Բայց ունգարական վարչութիւնը քնած չէր, նա իսկոյն առաւ այդ բանի հօտը, և աշխատեց արգելքներ հանել դրա առաջ և յիշուի, նա այդ յաջողացրեց նրան կուսեցնելով կոմս Անդրաշի հետ: Անդրաշին մի մասնաւոր յանձնաժողովի միջոցով Բոսնիայի ապագայ կազմակերպութեան մասին մի ծրագիր պատրաստել տուեց: Բայց այդ ծրագիրը շատ լաւ համապատասխանում էր Ֆրիլիպպովիչի նպատակներին: Տիտան աշխատեց որ այդ ծրագիրը իրագործվի և դրա մասին այս վերջինը ունգարական վարչութեան կողմից յայտնեց Անդրաշին, որ նրա քաղաքականութեան պարամետրի անդամների կողմից հաւանութիւն գտնելու միակ և վերջին միջոցն է յետ կանչել Ֆրիլիպպովիչին: Այդ ժամանակ ուղարկեցին Անդրաշի ծրագիրը Ֆրիլիպպովիչին, որը, ինչպէս և յոյս կար, ընդունեց իր հրաւերը:

Բայց որովհետեւ Վիէնայի պաշտօնական շրջաններում, կարելի եղածին չափ, կամենում էին թէ կրօնատական տարրը պահպանել նոր կազմակերպութեան մէջ, և թէ վստահացնել Ֆրիլիպպովիչին պատահի դէպի նրան ունեցած համակրութիւնը, այդ նպատակով նրանք վճռեցին այս նուրբ յանձնարարութիւնը յանձնել կայսրի մօտերի բարոն Բէլին: Հէնց սրա համար է որ գերմանական Ֆէլդ գնացել է Սերալէյօ:

Կոմս Նուվալովը այս նոյեմբերի 14-ին Պէշտից եկաւ Վիէնա և մտադիր է այս երեկոյ գնալ Լոնդոն: Կ. Պօլսից հեռագրում են «Polit. Corresp» լրագրին, որ գերմանական Ֆէլդ յայտնել է Լեւէ-Բուրգասի մօտ գտնվող Թիւրքաց առաջապահ գունդերի հրամանատարին, որ նա հրաման է ստացել գերմանական ծառայողից առաջ տանելու իր զօրքերը Սերալէյի բարձրութիւնների վրա:

Թիւրք զօրքերը Սերալէյի բարձրութեան հրաման են ստացել յետ քաշվել Սերալէյից, այնտեղ թողնելով մի գունդ պահպանող զօրք: Մի և նոյն ժամանակ Սերալէյի Թիւրք առաջապահ գունդը երկու նոր գնդերով ամրացաւ:

ՏՐԱՆՍԻԱ

Պ. Հիպպոլիտ Լիւկա, որ գերմանացի մատենագիր և պատմաբան էր, և որ մի և նոյն ժամանակ բանաստեղծ, վեպաստ և հուշակաւոր դրամատիկական հեղինակ էր, այս օրերս մեռաւ Փարիզում իր 70 տարեկան հասակում:

Պ. Հիպպոլիտ Լիւկա սկզբում գրում էր զանազան հանդէսների (revue) մէջ, յետոյ մօտ 1837 թւին նա աշխատակցեց «Siècle» լրագրին իբրեւ դրամատիկական և գրականական կրիտիկ. բացի սորանից նա ուրիշ շատ լրագիրների էլ աշխատակցեց:

Նա Ֆրանսիական թատրոնում և Սերալէյում մօտ քսան բեմական գրուածքներ ներկայացնել տուեց, այդ գրուածքներից մի քանիսը, հին և մի քանիսն էլ սպանիական գրուածքների նմանութիւն են ինչպէս՝ «Tisserand de Ségovie», «Medecin de son honneur», «Hameçon de Phénice» և այլն: Նա նոյնպէս գրեց և մի քանի փոքրիկ օպերաներ ինչպէս՝ «Etoile de Seville», «Belisaire» և այլն:

Հիպպոլիտ Լիւկան նոյնպէս դրագետների ժողովի հիմնադիրներից մէկը եղաւ: Պ. Տէն Ֆրանսիական ակադեմիայի անդամ է ընտրվել:

«La Gironda» լրագիրը ասում է որ պ. սենատոր Ֆուրկան ցաւօք սրտի չը կարողացաւ Վէրսայլ գնալ մասնակցելու մի մշտնջենական սենատորի ընտրութեան քուէարկութեանը: Բժիշկները ընդդիմացան այդ ճանապարհորդութեանը, որ կարող էր չափեց դուրս հոգ-

նեցնել պատուելի սենատորին, որը զեռ շատ ժամանակ չէ որ առողջացել է: «Le Petit Meridional» լրագիրը ասում է որ պ. Վեր- նէսը, որ Մոնպելիէի առաջին շրջանի պատ- գամաւոր էր, թողեց իր գլխաւոր խորհրդա- տաւածան պաշտօնը, որպէս զի իր պատ- գամաւորութեան չհասարակապետական կան- ղիդանքներն մի ձայն էլ աւելի տայ:

Կայսերական թերթերը հրատարակում են, որ միւնիստրները կը փոփոխվեն, նրանք ասում են, որ պ. Գիւֆօրը կը հրաժարվի խորհր- դարանի նախագահութենից և արդարեւ թեան միւնիստրութենից, և դրա առաջին տե- ղին կը յաջորդէ Ֆրէսինէն, իսկ երկ- րորդ տեղին կը յաջորդէ պ. Մարսէրը: Պ. Լեոն Սէյը ժամանակաւորապէս կոնս- նայ Ֆինանսների միւնիստրութիւնը, իսկ պ. Կրանցն էլ հասարակական աշխատանքները: Այս լուրերը ոչ մի հիմք չունեն: Բայց ճշ- մարտն այն է որ աջակողմեանները ցանկա- նում են որ մի անհամաձայնութիւն ծագելով Ֆինանսների միւնիստրի և բերդէտի յանձնա- ժողովի նախագահի մէջ պ. Լեոն Սէյը հը- րաժարվէր պաշտօնից: Բայց այսօր համա- ձայնութիւնը վերականգնվեց, և յետագէտների ընդհանուր երկիւղը փարատվեց:

Մի անհամաձայնութիւն է նշմարվում յետ- գէտների բանակում:

Ինչպէս երևում է աջակողմեան սենատոր- ներից մի քանի անգամներ պակաս են. յարկ եղաւ որ դրանց հրաւիրեն վաղվայ ընտրու- թեան համար:

Յրանախական Ակադէմիան այսօր նոյեմբերի 14-ին ընտրել է պ. Տէնին 20 ձայնով 4-ի դէմ, որ տրվել էր յօգուտ պ. Էրուարը Պուր- իէին: Պ. պ. զը Սաւին, Գիւլիէրմիէ դը Զօրանը և Օմալ դուքսը ներողութիւն էին խնդրել նամակով, որ չեն կարող ներկայ գտնվել նստին իրանց տկարութեան պատճա- րով: Պ. Լեոնը բացակայ էր: Պ. Վիկտոր Հիւգօն, բոլորովին առողջ, նստած էր պ. Ժիւլ-Պալմիէի և պ. Ժիւլ Միսնի մէջ տեղը: Պ. Օմալ դուքսը, որ իր հիւանդութեան պատճառով ներկայ չէր կարողացել գտնվել, յայտնել է որ եթէ նա ներկայ լինէր, նա յօգուտ պ. Տէնի դուքս կը ձգէր:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՔԻՍԵՐՑ

Երգում, 28 հոկտեմբերի

Երբ հեռացան Երգումից մեր զօրքերը և լքե- վեց Ղարսը յետ եկած օֆիցերներով՝ չէր կա- րելի պատահել ոչ մէկին, որը Երգումը միտը բերելու չը յայտնէր իր ցաւակցութիւնը նորան այդպէս շուտ թողնելու համար: «Ախ, քանի տխուր որ ձմեռը ևս չը մնացելը Երգում» կրկ- նում էին բոլորը, որոնք դիմում էին նաև իրանց սիրելեաց ծոցը: Երևում էր որ այդ գեղեցկու- թեան քաղաքը խիստ էր գրաւել ուս հիւրերի սիրտը, որ հայրենեաց և հարազատների սէրը անգամ խոտարնեցնում էին Երգումի փառա- շանաց առաջ: Եւ չէր կարելի մեր հերոսներին չը տանել Երգումից սքանչելի յիշողութիւն, երբ մեր հայրենակիցները ցոյց տուին իրանց այնպիսի հրապարհի կողմերից, նոքա սփռեցին իրանց հիւրերի առաջ օտարասիրտութեան բոլոր զգացմունքը, եղբայրական յորդանքը, աւան- դական համատեղութիւնը, նահապետական մտե- ռութիւնը, ընտանեաց չեղած եղբայրսիրու- թիւնը, հայրական խնամքը տան մէջ և մայրա- կան հոգատարութիւնը: Այո, ուս զօրա- կանը իրաւունք ունէին այդպիսի յափշտակիչ հայերի զորավազ յարաբերութիւններով, սիրա- լիր ընդունելութեամբ և տաք համակրութեամբ և այդպիսի մի իրողութիւն անկասկած խիստ ուրախել է իւրաքանչիւր հայի համար, որի անուան վրա ծանրանում է միշտ օտարի նախա- պաշարմունքը: Բայց որչափ սքանչելի է տալա- տրութիւնը, որ զօրքում է Երգումը բուն հա- յի վրա, այնպիսի մի թշուառ հայի, որը մտքով միշտ եղել է Հայաստան, իսկ ծնվել, սնվել, հասակ առել, ապրել, չլինել տեսել միայն խորթ ընտելութիւն, խորթ չըլան և խորթ տարր: Այդպիսի

մէկի վրա Երգումի ազդեցութիւնը այնչափ դի- թաւան է, որչափ ծանր, այնչափ կենդանացու- ցիչ, որչափ և ճնշող, այնչափ կենսատու, որչափ և մահաբեր: Այդպիսի մէկը ապրելով Երգում չորս- հինգ ամիս, պատելով նորա շրջակայքը, մտնե- լով կիսաւերակ վանքեր, հին հին սրբատեղիք, բարձրադիր մենաստաններ, լսելով հարկաւոր պատմական աւանդութիւններ, գիւղերի և աւան- ների անուններ, որոնք տասնեակ աղետալի դա- րեր արհամարհելով, դեռ պահել են իրանց մէջ հարազատ զաւակներին, լսելով Երգումի և գիւ- ղօրայից հիւանդի և ներդաշնակ բարբառը, զուտ հայկական հոգիին և ուղղութիւնը, ևս այն գմայլիչ կախարհ պահ տալով, որ յատուկ է մեր ազգին, ինչպէս գեղեցկութեան առաջին ներկայացուցիչ- ներից մէկին, իսկ միւս կողմից լսելով շարու- նակ մուշեղիների տխրածայն աղաղակը հարիւ- րաւոր միջադէպներից, տեսնելով տաճիկներին խաչվածքը, Սուրբ Օհան, Արծաթի, Արծնի, Երկիւստ, Պարտէզ, Այգեղանի, Պատանայէն, Առ- ռազմ, Զմեռագոմ, Ըղտածոր, Գանձածոր, Մոնթապատ, Սևափայտ և այլն և այլն գիւղերի տէր և բնակիչ, այդպիսի մէկը, ասում եմ, ըզ- զում է միտադել և հիացմունք և մորմոք, հիա- նում է այն գմայլիչ հոգից, որ փչում է Հայաս- տանի հողը, օդը և հոգին, իսկ կոկոնում որովհե- տե այդ ամենին տիրապետում է ազգականութեան պատկեր—կիսալուսնի իշխանութիւնը: Եւ ինչ, թէպէտ հաւածեալ, թէպէտ ստորակ թէպէտ, արիւնքաւոր, թէպէտ կիսաշունչ, բայց հայը ապրում է դեռ իր նախնեաց երկրում հայրե- նեաց համար միշտ աղօթելով էլ չուզելով լսել դարերի սպառնալից խօսքերն թէ հայ ասելը ոչ այլ ինչ է եթէ ոչ զբկանք, վիշտ և մահ... Վա- ստը որոյ դուքս իրաւացի բացականչեց Երգում- մում մի օր մի բազմամարդ սեղանի վրա գնե- րալ Լադարիւր տաճիկներն խօսքերով: «Եֆէն- դիներ, մի ազգ որ այնչափ լրբաբար կարողա- ցել է տանել բոլոր աշխարհի նեղութիւնը և մինչև այժմ պահել իր անունը, այդ ազգը էլ մեռնող ազգ չէ, զիտքը որն է այդ ազգը—այդ հայոց ազգն է, որին ևս պատկանում եմ» Բայց ամեն ինչ բացի Աստուած ունէ իր վերջը, այն- պէս և մի ազգ, և մի ժողովուրդ, այնպէս ևս հայերը, իսկ ինչպիսի կարող է հասնել մեր վերջը—ոչ խառնութեամբ, ոչ սրով և ոչ կրակով, այլ դաւով, խօսքով և հրապարակով: Ով կարօտ է բացատրու- թեան, թող դարձնէ իր հայեացքը այն գրու- թեան վրա որ ստեղծում է Անդրեան հայերի համար, նա հաստատում է Վան, Մուշ, Երգում, Գիւրեքեք, Խարբեք, Սվազ, Բիթլիս, և բոլոր հայաբնակ տեղեր միասնաբար ընկերութիւն- ներ, որոնք չեն խնայում ոչինչ խաղալի միջոց- ներ հայերին որսելու, միմեանցից բաժանելու, կրօնով թշնամացնելու և ազգութեան կապը քակտելու համար: Եւ հայը չէ կարող չը խա- վել, որոհեռ և միակ փրկութեան միջոց նա տես- նում է ուսման, կրթութեան և գիտութեանց մէջ, իսկ այդ ամենը տալիս են նորան անգ- լիացի և ամերիկացի քարոզիչները, այն էլ ոչ միայն վարձատրութիւն չը խնդրելով, այլ վար- ձատրելով և ամեն նեղութեան մէջ օգնութիւն հասնելով: Եւ մեր տարաբաղը ազգայինները չունենալով միտքից ոչ նիւթական և ոչ բարո- յական պատուաբեր քաջի երազային կախարհները կամայ ակամայ ընկնում են և մեծվում նոցա թակարդի մէջ, ինչպէս միամիտ որսը՝ լարած որդայթի: Թող էլ լուին Ռուսաստանի հայերը իրանց օղեղէն պլաններով, ակադէմիաներով, արհեստանոցներով, որ պիտի բանան Հայաս- տանի մէջ իրանց հարազատներին բարեբա- ր հանդիսանալու համար, հարուստ հայի բարեբա- րութիւնն է նորա անտակ մեղուկը ու գրպանը, որը լքցնելու միտքը է միակ նորա իղէալը... Ռու- սիան ինչ վախճան է սպասում տաճկահային —կրօնական բաժանումը, փոխադրած տեղու- թիւն, ազգային անտարբերութիւն, բարոյական և նիւթական ստրկութիւն, անգլիանոյթիւն ու անգլիանոյթիւն և յետոյ ... յետոյ ... Կ ո- ր ուս տ և մ ա հ: Ահա այն օրհասական խօսքերը որ հնչում են ինքնը ըստ ինքեան իմ ականջին երբ դիտում եմ այստեղի հայերի այժմեան վի- ճակը, թող զգան ում պարտ է զգալ...

Կրիգոր Նիկողոսեան

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՔԻՍԵՐՑ

Կ. Պոլիս 9 նոյեմ.

Այս շաբաթի ազգային թերթերն դարձեալ լի են հարստահարութեան լուրերով: Նոյեմ. 8-ին Պոլիս զանազան Բաղէշի ազգային խմբովին ա-

ղերսագիր տուին Գուռը մեծ վեղիրին Բաղէշի մէջ գործուած բարբարոսութեանց նկատմամբ: Մեծ վեղիրը խոստացաւ նկատողութեան առնու- արդ ասել սովորութիւն է: Ահին առաջնորդ Սրբանձունեանց Գարեգին վարդապ. կը հեռա- գրէ թէ քիւրդերն 300,000 դահեկանի ապրանք կ'ողողացնին հայոցմէ: Կարնոյ Առաջնորդը կը հեռագրէ թէ Ալաշկերտէն, Գղիէն օգնութիւն կը հայցին: Եւ Մուշէն մի հանրագիր կը ներ- կայանայ Պատրիարքարան յորում Մոյս միաբա- նութիւնը կ'ստէ թէ պէտք չէ միայն քիւրդերն մեղապարտ դատել. կառավարութեան անդամը միացած են քրդաց հետ, թող կուտան՝ որ ամէն չարիք գործեն: Ահնար է արդարութեան ա- տեաններու դիմել, վկայութիւն կը պահանջեն, և զի հայոց վկայութիւնը չընդունելով, զի քը- րիստոնեայ են, հետեւաբար երբեք թիւրք և չը- քէզ ու քիւրդ եղեւնազորներն չեն պատժուի: Թիւրք կառավարութիւնը կ'ստէ թէ բարեկար- գութիւնը ընկել համար չափ որս դրամի կը կարօտի, այլ մեք չեմք գիտեր թէ հայոց վկայութիւնը դատարաններու առջև ընդունելի ընել տալու համար ինչ ծախս հարկաւոր է:

Բարեկարգութեանց ծրագիրը տակաւին պիտի հրատարակուի. կ'ստեն թէ բարեկարգութիւնը առ այժմ Ասորեստանի, և Թերեւս Կարնոյ մէջ ալ պիտի ըլլան: Տեղույս «Մեռնող» թերթը մի քանի օրէ կը քննարկէ թէ Անգլիոյ պաշտպանու- թեամբ թիւրքերն մեծ փոխառութիւն մը ընել պիտի յաջողին: «Մեռնող» ցոյց կուտայ թէ այդ փոխառութիւնն զոյգացած դրամը ինչ բա- նի պիտի գործածուի, փոքրիկ մնացորդ մը կը մնայ բարեկարգութեանց համար, եթէ այդ մը նացորդն ալ զէնքի չը գործածեն: Այսու հանդերձ այդ փոխառութիւնը չեմք գիտեր հնարաւոր է ընել:

Նոյեմ. 8-ին Պատրիարք որբազանը, Քաղա- քական և կրօնական ժողովոց դիւաններուն հետ միասին Յունաց նորընտիր Պատրիարքի այցելութիւն տուաւ և մեծ պատուով ընդունուե- ցաւ:

Նոյեմ. 6-ին Ազգային Պատրիարքարան այ- ցելութեան եկաւ Ռուսիոյ դեսպան իշխան Լօ- պանօֆ, առաջին թարգման պ. Օնուի հետ միա- սին: Դոն էին խիմիան և իզմիրեան սրբա- դանք: Պ. դեսպանը երկար տեսակցութիւն մը ունեցաւ առանձինն պատրիարքի հետ: Պատ- րիարքարանի մեկնած միջոցին զպրոցի աշա- կերտը գեղեցիկ երգեր երգելով ողջունեցին զդեսպանը:

Պատրիարք սրբազանը անձնական տկարու- թիւն ունենալով բոլորիներն խորհուրդ տուած են Եւրոպա երթալ: Պոլսոյ հայք այս շաբաթ սկսան փոքրիկ հանգիստակութիւն մը ընել ճա- նապարհի ծախսերն հողաւոր համար: Գիտե՞ք որ Պոլսոյ հայ կղերն դրամի մասին չափ խեղճ վի- ճակի մէջ է: Ընդհանրապէս Պոլսոյ կղերականու- ներն արծաթապաշտ չեն և փող չափ քիչ ու- նեն, հազիւ կրնան ապրել: Պատրիարքը քիչ մը ատեն բացակայ լինելու համար արտօնութիւն պիտի խնդրէ Ազգային ժողովէն:

Զէյթունի խնդիրն գրեթէ լնցած է. գան- զատներ կան թէ Պատրիարքարանը Զէյթունի հայոց ապագամբութեան առաջն առնելու և զանոնք Քօզանը Ահմէտ փաշայէն բաժնելու աշխատած լինի, և այսու Ահմէտ փաշայ յաղ- թուած է: Ստուգութեան կարօտ են այս տե- ղեկութիւններն. թէպէտ գիտեմք որ Պատրիար- քարանը թող չարժեցաւ: Մարաշէն հոկտեմ. 20-ին, «Ապրիլի» զրուած միջոցով թիւրքացութեան մը մէջ հետեան կը կարգաւոր: «Անցեցի յորդորե- լու յատուկ պաշտօնիւ Սաէն բարձրապատիւ Զիյա և ձէլմեթ բաշաներու հրամանաւ խըր- կուած ձաճնոյ առաջնորդ գեր. տ. Պետրոս սըր- բազան և մեծ. Ղուլումեհան Գրիգոր Էֆէնդիին ի Զէյթուն գացին և բաշաներու բարձր հրամանն հաղորդելով պէտք եղած խրատներն տուին և մի քանի երեկի անձանց բանակաւորն գալով ի- րենց հաւատարմութիւնն և յարգանքն մա- տուցանել առաջարկեցին»:

Պ. Զերադի տեղան կը շարունակէ օրուան խնդիր ըլլալ. չեմք ուզեր հաւատալ որ այդ տեղը Պատրիարքի կարծիքներն յայտնող հա- մարուի:

Պ. Զերադ նոյեմ. 2-ին ձեռնարկեց գրել իւր տետրի Բ. մասն, յորում ցոյց պիտի տայ թէ ինչ բարոյական օգուտներ քաղեց հայ ազգը պատգամաւորաց Եւրոպա խրկուելէն: Յուսամք թէ պ. Զերադի վրա ազդեցութիւն ունենալ Պիլոնֆիլիքի արտասանած վերջին ճառը, յօ- րում օրդը խիստ հաւանական կը կարծէ որ Երգումի փոքր Ասիոյ ամենապատգամուր ամրու- թեանց կենսութիւնը լինի:

Պիլոնֆիլիքի այդ խօսքերն ակնհայտ կը ցնեն թէ՛ Հայաստան ամուր բերդերով ամրացնել, թրքական բանակ մը հոն պահել, այս պիտի ըլ- լայ Հայաստանի մէջ Անգլիոյ քաղաքականու- թեան ուղղութիւնը: Եւ սակայն երբ մեր հայ- րենիքը մշտնջենաւոր բանակաւորի մը ըլլայ ուր կը մնան այն ժամանակ մեր ապագայ ինք- նօրինութեան յայտնը:

Պիլոնֆիլիքի այդ ճառն, յորում ուրիշ կարևոր կէտեր ալ կան մեզ նկատմամբ, կարծեմք ան- գղիտեսէր հայոց աչքերն կը բանայ: Եւ պ. Զե- րադ անշուշտ կը զգուշանայ իր նոր հրատարա- կելիք տետրին մէջ հայ ազգը քաղաքական սխալ և վտանգաւոր ճանապարհի մը մէջ մղելէ:

«Արարատեան ընկերութեան» վանի վարժա- պետանոցի տեսուչ պ. Մկրտիչ փոթոգրաւան դէպի վան իւր ճանապարհորդութեան միջոցին մի կարևոր նամակ գրած է որոյ առաջին մասն հրատարակեց («Մասիս» և վերջի մասն ալ այս երեկոյ պիտի հրատարակէ. ներփակեալ կը խրկեմ հրատարակուածը, միւսն ալ գալ թղթատարով: «Մշակի» ընթերցողաց ուշադրութիւնը կը հե- ւիրեմք մասնաւորապէս վերջին մասին վրա: Հոն կը տեսնուի որ երբ հայ մը իւր անձը պաշտ- պանէ քրդաց և չէրքեղներու դէմ, կը պատժուի կառավարութեան կողմէ. և տակաւին ըստներ կան որ հարստահարութիւններն կառավարու- թեան հանդիմանումը չէ որ կը գործուի: Ռու- սիոյ մէջ եթէ չարագործ ուսու մը ուղէ կողոպ- տել կամ սպաննել հայ մը և հայը ուղէ ինք- ղինքն պաշտպանել և զեղեւնագործը դատաւո- րին յանձնել, միթէ կրնա՞ք երևակայել որ հայը կառավարութեան կողմէ պատժուի զի ինքզինքն պաշտպանել ուզած է:

«Արարատեան ընկերութիւնը» պ. ֆորթալա- լեանի նման երիտասարդներ Հայաստան խրկե- լով ոչ միայն ազգային դատարարութեան զօ- րաւոր մղում մը կուտայ, այլ նաև Հայաստանի հայոց վշտերն ազգու և ճշմարիտ կերպով հրա- պարակ հանողներուն թիւը կ'աճեցնէ:

«Թորոս Լեոնի» հեղինակ պ. Յերենց մեկնած է աստի դէպի Տիֆլիս:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Արշալոյս Արարատեան» լրագիր մէջ կար- դում ենք, «Տօթթօր Շիշմանեան Էֆէնդիին» որոյ համար տրամաբան և աղագասէր անձն մի է կը- սուի, և մեր քաղաքակցաց ծանօթ է, անցեալ շաբթու մէջ Ս. Պատրիարք Զօր ներկայանա- լով իւր Հայաստանեայց մայրենի եկեղեցւոյ գիրկը վերադառնալու փափաքն յայտնել և պա- տուով ընդունուել է: Նոյնպէս խաղաղացի Յրանկով անուն Լուսմէական Հայ մի և Նոյն փափաքով դիմոր է իւր մայրենի եկեղեցին և սիրով ընդունուել է Կրօնական ժողովի կողմէ» —«Արշալոյս Արարատեան» լրագիրը հաղոր- դում է. «Ազգային լրագիրներէն կրմանամբ մայրաքաղաքին մէջ վարժապետական ժողովոյ մի հաստատուելը: Սոյն ժողովը ամսոյս 15-ին իւր չորրորդ նիստն ընկելով մնայուն դիւան ընտ- րեւ և անոր յանձնեւ է վարժապետական ժողո- վին ուղղութեան և նպատակին վերաբերեալ կանոնական ծրագրի խմբագրել»:

ՄԵՄԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 22 նոյեմբերի: Այսօր առաւօտեան ժամի 10-ին հասաւ Ս. Պե- տրբուրգ Նորին Մեծութիւն Քաղաւոր Վայս- լը: Ծանապարհը երկաթուղու կայարանից մինչև պալատը բռնված էր զօրքերով և ժո- ղովուրդով, որոնք անդադար ուրա էին կան- չում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 21 նոյեմբերի: Պետական բանկի 50/0 տոմսակը առաջին շրջանի ար- ժէ 97 ռ., երկրորդ 95 ռ. 25 կ., երրորդ 95 ռ. 25 կ., չորրորդ 95 1/2 ռ., ներքին 50/0 առաջին փոխառութեան տոմսակը արժէ 235 ռ. 50 կ., երկրորդ 229 ռ. 25 կ., արեւելեան առաջին 91 ռ. 75 կ., երկրորդ 91 1/2 ռ., ոսկին 8 ռ. 42 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօն- դօնի վրա արժէ 23 3/8 պենս, ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 199, 50 մարկ, Փորթիգլ վրա 246 Ֆրանկ: Տրամադրութիւնը ամուր է:

**ԳԵՂԱՐԿԵՍՏԿԵՆ
ՀԱՆՌԻՄ**

որ գտնվում էր Դժոժվհանի փողոցի վրա Սա-
րաջիկի տանը, այժմ գտնվում է նոյն ԳՈՒԹ-
ՎԻԵՍԿԻ ՓՈՂՈՑԻ վրա, ՇԻՕԵՎԻ ՏՈՆԷԼ,
գերբնական կրթում և Կեսայիկի լուսանկար
խանութի մոտ մի և նոյն սանդուղքով: Այ-
ցեղորդերի Համար ԲԱՑ Է ԱՍԵՆ ՕՐ առաւե-
տեան 9 Ժամից մինչև երեկոյեան 5 Ժամը:
Հաւաքաճումին ՆՈՐ ԲՆԵՐ ԵՆ ԱՆԵՆԱՅՐԱՍԻ:
10—25

Մամուլի տակից դուրս եկաւ
ՕՐԵՑՈՅՑ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ

1879 թ. Համար.

Գինն է 15 կոպ. հարկւով գնողներին
20% զեղուսն էր լինի: Ստորագրաբաժնի
ճանապարհածուխը վճարումեն հարկը օ-
րինակի համար — 1 ր „
Երեսնի համար — „ 60 4

ЕЖЕДНЕВНАЯ ПОЛИТИЧЕСКАЯ И ЛИТЕРАТУРНАЯ
ГАЗЕТА

„ОБЗОРЪ“

будеть издаваться въ г. Тифлисѣ въ 1879 году по той же программѣ, въ томъ же направленіи, въ тѣ же сроки и въ тѣхъ же размѣрахъ. какъ издавалась въ 1879 году.

ПОДПИСНАЯ ЦѢНА. съ пересылкою или доставкою.
на годъ 15 руб.; на пол-года — 8 р., на три мѣсяца — 4 р.
25 к. и на одинъ мѣсяць — 1 р. 50 к. желающіе подписаться
разсрочкою на цѣлый годъ вносятъ по пяти руб. сер. къ
началу января, апрѣля, и августа.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ: въ конторѣ газеты, въ г. Тифлисъ, на Головинскомъ проспектѣ, д. № 7. Иногородные адресуютъ свои требованія просто: «ВЪ Г. ТИФЛИСЬ, въ редакцію газеты «ОБЗОРЪ».

Редакторъ Н. Николадзе.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹ՝

ԱՄՍԱԳԻՐ

Հրատարակվում է ամիսը մէկ անգամ առան-
ձին գրքերներով, իւրաքանչիւրը 4-6 էջերով:
Տարեկան գինն է 6 ռ. ամիսայն տեղը:
Երազեկ Կոփլէս. Редакция Армянского
журнала «Педагогический Листокъ» Сололаки,
Садовая улица, домъ № 42-
Թիֆլիզում տարազգրկել կարելի է Գրիգորեան-
ցի և «Կենդանական» գրավճառանոցներում,
և Արցունաց եղաբար խանութում:
«ՄԱՆԿԱՎԱՐՅԱՆ ԹԵՐԹՈՒ» յուրիս, օգու-
տան, սպառաճեմքի և հոկտեմբեր ամիսները գըր-
քակները (№ 1, № 2, № 3, և № 4) լայս տե-
սան. ամսագրի նպատակը, ուղղութիւնը և պը-
րագրումը ցանկացողները կը գտնեն այդ գրքոյե-
կները մէջ:
Պ. Կոր ըստանորդները կը ստանան ըւրրը
գըրքերըն սխաճ առաջինից:

Խմբագիր Եակոբ Տէր-Յովհաննիսեան

ԳՐԻԳՈՐ ՆՆՈՒՆԵԼՆԻ
ՊԵՏՐՈՍԻ ՀԵԳՈՒՍՏՆԵ-
ՐԻ ԽԵՆՈՒՊՈՒՄ ԵՐԵՎԱՆ
ՆԵԼՆ ՀՐԳԱՐԵԳԻ ՎՐԱ

նաազդեկ են մեծ քանակությամբ նվաճի եւ
 ՏՐԻԱԿՈՒ ՍԻՐՏԻԻԿԵՆԵՐԻ ՇՈՐՈՒՐ, որսորդական
 ԱՌԱՒՈՏԵԱՆ ԺՕԿԵՏՆԵՐ, ձկնառայեւ ՊԱԼՏՈՆԵՐ և
 ՎԱՐՏԻԿԵՆԵՐ, երեխայից հագուստներ, վե-
 ՐԱՐԿԻՈՒ—ԽԱՆՏՆԵՐ զարդերով, նոյնպէս ըն-
 դուեղում են ՊԱՏՈՒԽՆԵՐ զինուորական և
 քաղաքական հագուստներէ համար: Յոյս ու-
 նեմ, որ ինչպէս պատուիրողները նոյնպէս է
 գնողները ԲԱՆԱԿԱՆ ԿԸ ՄՆԱՆ:

10-75

ОТКРЫТА ПОДПИСКА

НА ИМѢЮЩІЙ ВЫЙТИ ВЪ ДЕКАБРЬ НЫНѢШНЯГО ГОДА

РУССКИЙ ХУДОЖЕСТВЕННЫЙ И ЛИТЕРАТУРНЫЙ АЛЬМАНАХЪ

„КОМЕТА“

Содержаніе Альманаха будетъ слѣдующее: (отдѣлъ 1. *Общія календарныя свѣдѣнія.* (Святцы; перечень русскихъ святыхъ и мѣсточтимыхъ угодниковъ; митрополиты и патріархи русскіе; желѣзные дороги и пароходы; почта телеграфы; историческія, статистическія и иныя свѣдѣнія; примѣты, обычаи и поверья на Руси; бюджеты нашихъ земствъ за три послѣднія года; адресъ-календарь, и проч., и проч.). Отдѣлъ 11. *Литературный.* ПОДЪ ПОДЪ ПЛЕВНОЙ. Разсказъ В. И. Непировича-Данченко, РУССКІЙ ВИБАВЪ ПОДЪ КОНСТАНТИНОПОЛЕМЪ. Сцены Г.-ича НОВЫЯ СИЛЫ Повесть Ан. Григорьева. ИЗЪ ЖИЗНИ ПРОВІНЦІАЛЬНАГО ТЕАТРА. Наброски Н. С. Стружанина. ПОДЪ ЗЕМЛЕЮ, Отрывокъ изъ романа „Русскій Монте-Кристо“ А. М. Д.-іева. МИМОХОДОМЪ Сцены К. А. Тарновскаго. БАЛЕТЪ ПРИ СВѢТѢ ЛУНЫ. Изъ воспоминаній охотника С. С. Б.-ова „БАТЮШКА ИВАНЪ НАЗАРЫЧЪ и МАТУШКА АГАФЬЯ ДМИТРЕВНА“. Очеркъ быта сельскаго духовенства Демокритова (иссѣдникомъ). ВИДѢНІЕ. Фантастическій разсказъ—скаго. *Въ деревнѣ.* Фельетонъ Я. Б. *Петербургскія замѣтки* Фельетонъ Н. *Наші думы.* Фельетонъ А. Д. К. *Московский мистокъ.* Фельетонъ „Зрителя“. *Ито, и се.* Фельетонъ А. П.

Вѣтъ названіи статьи написаны исключительно для нашего альманаха, Свои стихотворенія намъ общали: Н. Л. Пушкиревъ, Л.- Г. Граве, Л.-ръ, и многія другіе. Въ числѣ переводныхъ статей, между прочими, будутъ: новый разсказъ Алфонса Доде очеркъ Пьера Верона, и нѣсколько отрывковъ изъ книги Рембо „Русская Исторія“. Отрывки эти будутъ выбраны такимъ образомъ, что читатели ознакомятся со всѣми отдѣлами этой крайне интересной книги. *Смѣсь.* Анекдоты, маленькія стихотворенія, шутки, отсроты, и проч. Отдѣлъ III. *Художественный Картины:* К. А. Трутовскаго—„*Лѣтнее ночью*“; Н. В. Неврова—„*Роковая встрѣча*“; Вл. Е. Маковского—„*Дрѣтская туррушка*“; Степанова. П. С.—„*Савинъ Сторосевскій монастырь*“; Н. И. Грибкова—„*Сора Иванъ Ивановичъ съ Иваномъ Никифоровичемъ*“, и историческій эскизъ Н. С.-а. картина Неврева—до сихъ поръ не вышла изъ мастерской художника, а гг. Трутовскаго, Степанова и С.-а написаны для нашего альманаха *). Кромѣ этихъ произведеній будутъ помѣщены рисунки нашихъ извѣстныхъ художниковъ—карриатуристовъ, работающихъ въ русскихъ сатирическихъ журналахъ—гг. Богданова, Чичагова, Кланга, Виноградова, и друг. И эти рисунки исполнены исключительно для „Кометы“. Въ текстѣ Альманаха будетъ, кромѣ того, множество мелкихъ рисунковъ.

Какъ повесть, мы напечатать въ Альманахъ до 300 fac-simile (точный снимокъ съ почерка) наиболѣе выдающихся политическихъ дѣятелей, ученыхъ, писателей, музыкантовъ, художниковъ, артистовъ, и проч. Перечислять имена всѣхъ ихъ, заняло бы слишкомъ много мѣста, а потому мы укажемъ только на нѣкоторыхъ. Въ числѣ ихъ мы назовемъ: Политическихъ дѣятелей: Наполеона III; имп Евгения; Ця IX; Магъ-Магона; Тьера; Гамбетту; герцога Брелли и Декатъ: Бюффе; Эм. Жилардена; Луи Блана; Жюль Симона; Гревю; Висмарка; Мольтке; Курко; Радецкаго, Скобелева 2, ит. д. Ученыхъ и писателей: Виктора Гюго Ал. Дюма; Ал. Додэ; Ренана; Эркмана—Шатрина; Жюль Симона, Эм. Золя; Эм. Ожье, Литре; Леруве; Огт. Фелье; Пр. Сарсе; Л. Фигье; Поль-де-Кона; Жоржъ Зандъ; Ал. Каррѣ; Г. Дрозъ; Клодъ Бернаръ, Вирхова; Дарвина; Нелатона; Пушкина; Лермонтова; Грибодова; Гоголя Островскаго; Тургенева; Некрасова; Щедрина; Гончарова; Диккенса; Тендерей, и др. Музыкантовъ, художниковъ, актеровъ и пѣвцовъ: Глинку; Даргомыжскаго; Сброва; Верстовскаго; Чайковскаго; А-и Н. Рубинштейновъ; Берліоза; Россини; Гуно; Викт. Массе; Амбр. Тома; г. Давида; Верди; Вагнеръ; К. Таузинга; Вьетана; Іохима; Мошелесса; Сивирі; Пол. Виардо; Листа; Литольфа; Рахели; Ристори; Россі; Шепкина; Живокини; Садовскаго; Шумскаго; Федотовой К. Н. Васильевой; Самоилова; Бозіо; Пятти (ею сочиненный и писанный романсы); Лукка; Нильсонъ; Герстеръ, Тамберлика, и проч. и проч.

Чтобы собрать эту массу fac-simile, Редакция Альманаха приходилось покупать иной раз ради одной подписи целыя сочинения. Выпуская такой Альманах, мы не без основания рассчитываем конкурировать съ знаменитыми английскими изданиями въ этомъ же родѣ. Что каждый изъ шести *первыя* рисунковъ будетъ достоинъ рамки, за это могутъ быть порукою имена художниковъ—любимцевъ нашей публики, о произведеніяхъ которыхъ русская пресса всегда отзывалась весьма сочувственно.

Подписавшіеся на Альманахъ до 20-го декабря платятъ за него 2 р. съ пересылкою; въ отдельной продажѣ цѣна ему назначается 3 р.

Въ Москвѣ подписка принимается: у И. Г. Соловьева; въ центральномъ книжномъ магазинѣ; у И. И. Смирнова, и у М. О. Вольфа. Иногородные подписчики требованія свои адресуютъ исключительно къ редактору-издателю альманаха — А. М. Дмитріеву, въ Москву на 3-ю Мещанскую, д. Тимофеевскую.

Объявления принимаются в редакцїи журнала „Свѣтъ и Тѣнь“ а также и у издателя, только до 15-го декабря. Впереди текста дѣла: за страницю (60 строкъ отъ 60—70 буквъ) 40 р.; за полъ-страницы—25 р., и за четверть—15 р.; въ концѣ книги: за страницю 35 р.; за полъ-страницы—20 р., и за четверть—12 р.

Примѣчаніе. Альманахъ будетъ отпечатанъ въ количествѣ 12 т. экземпляровъ.

*) Все шесть картин этих, разбитые в большой полутьке, исполнены будут хромолитографией — в несколько красок.

[illegible]